
Հայաստան

Իրավապաշտպանների պաշտպանության օբսերվատորիա

Տարեկան զեկույց 2011

2010թ. «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում ներկայացված փոփոխությունները մտահոգիչ են, քանի որ կարող են սահմանափակել միավորումների ազատության իրավունքը: Մինչդեռ 2011թ. ընդունված «Հավաքների մասին» օրենքն ավելի արդյունավետ է երաշխավորում հավաքների ազատությունը, 2010թ. խաղաղ հանրահավաքները գործնականում սահմանափակված էին: Դրական զարգացում է այն, որ 2010թ. դադարեցվեցին երեք իրավապաշտպանների նկատմամբ դատական գործընթացները:

Քաղաքական իրավիճակ

2010թ. հունիսի 14-18-ը Իրավապաշտպանների իրավիճակի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Մարգարեթ Սեկագիան կատարեց իր առաջին այցելությունը Հայաստան: Առաքելության ավարտին նա հայտնեց իր մտահոգությունն իրավապաշտպանների, մասնավորապես՝ մարդու իրավունքների խախտումների դեպքերն արձանագրող լրագրողների նկատմամբ բռնության, հարձակումների, սպառնալիքների, հետապնդումների արձանագրված դեպքերի կապակցությամբ: Նրա մտահոգությունը հիմնականում վերաբերում է միավորումների ազատության անօրինական սահմանափակումներին, որոնք կարող են հետևել «Հասարակական կազմակերպությունների մասին» օրինագծի ընդունմանը, մտահոգության առարկա են նաև հավաքների ազատությունը խոչընդոտելը, հանրահավաքների և հանդիպումների համար դահլիճների վարձակալության սահմանափակումը, արտահայտվելու ազատության սահմանափակումը, ինչպես նաև՝ իրավապաշտպանների դեմ չարաշահումների դեպքում անպատժելիությունը¹:

Բացի այդ 2011թ. մայիսի 6-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Համընդհանուր պարբերական դիտարկումը (Universal Periodic Review (UPR)), որն ի թիվս այլոց, հանձնարարեց Հայաստանին «իրականացնել լրագրողների, ընդդիմության ներկայացուցիչների և իրավապաշտպանների դեմ հարձակումների դեպքերի արդյունավետ քննություն, ապահովել իրավապաշտպանների, լրագրողների և ընդդիմադիրների նկատմամբ հանցագործությունների և բռնությունների արդյունավետ քննություն ու քրեական հետապնդում և արդարադատության առաջ կանգնեցնել մեղավորներին», ինչպես նաև՝ «վերանայել օրենսդրությունը և դրա կիրառումը՝ առանց սահմանափակումների հավաքների և արտահայտվելու

¹ Տես՝ ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի հայտարարությունը իրավապաշտպանների իրավիճակի վերաբերյալ, 2010թ. հունիսի 18 և Մարդու իրավունքների խորհուրդ, Իրավապաշտպանների իրավիճակի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Մարգարեթ Սեկագիայի զեկույցը Հայաստանում կատարած առաքելություն, UN Document A/HRC/16/44/Add.2, 2010թ. դեկտեմբերի 23

ազատությունն ապահովելու համար՝ բացառությամբ միջազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, լիարժեքորեն հարգել և նպաստել արտահայտվելու ազատությանը, երաշխավորել արտահայտվելու և հավաքների ազատությունը բոլոր քաղաքական ուժերի, լրատվամիջոցների և իրավապաշտպանների համար»²:

2011թ. ապրիլի դրությամբ, Հայաստանի իշխանությունները դեռևս չեն իրականացրել 2008թ. մարտին Երևանում նախագահական ընտրություններին³ հաջորդած ցուցարարների դեմ անհամաչափ ուժի կիրառման արդյունքում տեղի ունեցած բախումների արդյունքում մահվան և վնասվածքների դեպքերի լիարժեք քննություն: Չի իրականացվել նաև ոստիականությունում տեղի ունեցած դաժան վերաբերմունքի մասին մեղադրանքների համապատասխան քննություն: Սակայն քաղաքական բանտարկյալները⁴, որոնք անազատության մեջ են գտնվել 2008թ.-ից, ազատ են արձակվել ՀՀ նախագահի կողմից առաջարկված 2011թ. մայիսի 26-ին ընդունված համաներման մասին որոշման հիման վրա:

Դրական իրավական նախաձեռնություններից հարկ է նշել 2010թ. մայիսի 18-ին ընդունված Քաղաքացիական, Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ կատարելու մասին օրենքը, որն ապաքրեականացնում է զրպարտությունը և վիրավորանքը⁵: Սակայն դեռևս մտահոգություններ կան լրատվամիջոցների անկախության վերաբերյալ, մասնավորապես՝ զրպարտության և վիրավորանքի համար տուգանքները քաղաքացիական մակարդակում աճել են երկու անգամ՝ լրատվամիջոցների համար ստեղծելով սննկացման կամ փակվելու վտանգ: Ինչ վերաբերում է բացասական իրավական զարգացումներին, հարկ է նշել, որ 2010թ. հունիսի 10-ին ՀՀ նախագահը ստորագրեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը ստացավ լայն լիազորություններ՝ հեռուստահեռարձակման լիցենզավորումը դադարեցնելու և ծրագրային սահմանափակումներ մտցնելու առումով՝ վտանգելով հեռուստաալիքների բազմազանությունը: Չնայած ազգային և միջազգային չԿ-ների կողմից արված կոչերին, օրենքում աննշան խմբագրումներ են արվել: Այս նոր օրենքի կիրառմամբ 2011թ. հունվարին Երևանում հեռարձակվող հեռուստաալիքների թիվը կրճատվեց՝ 22-ից դառնալով 18⁶: Տպագիր և ինտերնետային լրատվամիջոցները բազմակարծիք են,

²Տես՝ Մարդու իրավունքների խորհուրդ, Համընդհանուր պարբերական դիտարկման ընթացքում Աշխատանքային խմբի զեկույց՝ Հայաստան, UN Document A/HRC/15/9, 2010թ. հուլիսի 6:

³ Բախումների արդյունքում զոհվել են տաս մարդ և հարյուրավոր անձինք վիրավորվել են:

⁴ 2001թ. Եվրախորհրդի Գլխավոր քարտուղարը նշանակել էր փորձագիտական խումբ՝ Հայաստանում և Ադրբեջանում քաղաքական բանտարկյալների սահմանում որոշելու համար: Ըստ Եվրախորհրդի փորձագետների՝ «ազատությունից զրկված անձը համարվում է քաղաքական բանտարկյալ, եթե. ա) Ազատագրվումը իրականացվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում կամ դրա արձանագրություններում ամրագրված հիմնարար երաշխիքներից մեկի խախտմամբ, մասնավորապես՝ մտքի, խղճի, կրոնի, արտահայտվելու, տեղեկատվության, հավաքների և միավորումների ազատության խախտումով, բ) Ազատագրվումն իրականացվել է բացառապես քաղաքական դրդապատճառներով, որն է հանցագործության հետ կապ չունենալով, գ) Քաղաքական շարժառիթով ազատագրվման ժամկետը կամ պայմանները համաչափ չեն այն արարքին, որում մեղադրվում կամ կասկածվում է անձը, դ) Քաղաքական շարժառիթով, անձի ազատագրվումը խտրականորեն է իրականացվում այլ ազատագրված անձանց համեմատ, ե) Ազատագրվումը տեղի է ունեցել ակնհայտորեն անարդար դատավարության արդյունքում և այդ փաստը կապված է իշխանությունների կողմից քաղաքական շարժառիթների հետ: Տես՝ Եվրախորհրդի Գլխավոր քարտուղար, Քաղաքական բանտարկյալների գործերը Հայաստանում և Ադրբեջանում, Document SG/Inf (2001)34, 2001թ. հոկտեմբերի 24:

⁵ Տես՝ HO-98-N Որոշում (Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին) և HO-97-N Որոշում (Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին), 2010թ. մայիսի 18: Տես՝ Քաղաքացիական հասարակության ինստիտուտ:

⁶ 2010թ. հուլիսին նոր օրենքի կիրառմամբ՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, որի անդամներին նշանակում է երկրի նախագահը, հայտարարեց հեռարձակման մրցույթ: Մրցույթի

սակայն նրանց լսարանը սահմանափակվում է քաղաքներում բնակվող կրթված մարդկանցով: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն նաև հայտնել է իրավապահ մարմինների կողմից լրագրողների և լրատվամիջոցների նկատմամբ ճնշումների մասին⁷:

Միավորումների ազատության հնարավոր իրավական խոչընդոտներ

2011թ. ապրիլի դրությամբ, 2009թ.-ի սեպտեմբերի 23-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված և 2009թ. հոկտեմբերի 1-ին Ազգային ժողովին ներկայացված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մտահոգիչ է, քանի որ այն կարող է սահմանափակել միավորումների ազատությունը: Մասնավորապես, փոփոխությունների համաձայն, կպահանջվի ՀԿ-ների վերագրանցում՝ կազմակերպության հասցեի կամ գործադիր մարմնի փոփոխության դեպքում⁸: «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի նախագծի համաձայն ՀԿ-ներից նաև կպահանջվի հրապարակել իրենց ֆինանսական տեղեկատվությունը, եկամտի աղբյուրները, անդամների թիվը յուրաքանչյուր ամսվա համար, ինչպես նաև հարկային ծառայություններին ներկայացրած բոլոր հարկային հաշվետվությունների պատճենները: Օրինագիծը նաև սահմանում է կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված բոլոր անձանց անունների և ցանկացած փոփոխության մասին հրապարակում: Ընդունվելու դեպքում օրինագիծը լուրջ բեռ կդնի ՀԿ-ների վրա, որոնք հավանաբար ստիպված կլինեն գտնել լրացուցիչ ֆինանսական և մարդկային ռեսուրս: «Հասարակական կազմակերպությունների մասին» օրինագծի քննարկումը հետաձգվել է մինչև Ազգային ժողովի 2011թ. աշնանային նստաշրջանը:

Իրավական բարելավումներ, սակայն խաղաղ հավաքների շարունակվող խոչընդոտներ

2011թ. ապրիլի 14-ին ընդունվեց «Հավաքների ազատության մասին» նոր օրենքը, որը մի շարք բարելավումներ է պարունակում: Առաջինը՝ օրենքը նախատեսում է, որ եթե որևէ պատճառով քաղաքապետարանը որոշում է արգելել հավաքը կազմակերպիչների կողմից նշած օրը, ժամին կամ վայրում իրականացնել, քաղաքապետարանի ներկայացուցիչը և հավաքի կազմակերպիչը կարող են հանդիպել և բանակցել, գտնելով ամսաթվի, վայրի կամ այլ առնչվող հարցերի վերաբերյալ փոխզիջում: Օրենքը նաև հստակորեն նշում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրենց լիազորություններն իրականացնելիս պարտավոր են ղեկավարվել համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: Օրենքը, սակայն, նախատեսում է, որ հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել, եթե դա բխում է հանրային շահից կամ այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունից: Մտահոգություն է առաջացնում օրենքի 19(3) հոդվածը, որի համաձայն՝ հավաքը կարող է արգելվել, եթե այն անցկացվում է ՀՀ նախագահի

արդյունքները հայտարարվեցին 2010թ. դեկտեմբերի 16-ին և 23-ին: Ներկա վարչակազմի նկատմամբ քննադատաբար տրամադրված հեռարձակողները, ինչպիսիք են՝ Ա1+, Գալա (Գյումրի) և ԱԼՄ հեռուստաընկերությունները թվային հեռարձակման ցանցում հեռարձակման լիցենզիա չեն ստացել:

⁷ Տես՝ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, *Տարեկան զեկույց 2010, Հայաստանում խոսքի ազատության հետ կապված իրավիճակի և լրագրողների և լրատվամիջոցների դեմ բռնությունների մասին*, 2011թ. փետրվար:

⁸ 2010թ. հունիսին Հայաստան կատարած այցից հետո, Իրավապաշտպանների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողն այս կապակցությամբ ընդգծել է, որ այդ պահանջը հակասում է Եվրոպայում ՀԿ-ների իրավական կարգավիճակի վերաբերյալ Եվրախորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականներին (CM Rec 2007 14), որի համաձայն՝ պետության հավանությունը պարտադիր չէ կազմակերպության կանոնակարգի փոփոխման դեպքում. Տես՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, Իրավապաշտպանների իրավիճակի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Մարգարեթ Սեկագիայի զեկույցը Հայաստանում կատարած առաքելություն, UN Document A/HRC/16/44/Add.2, 2010թ. դեկտեմբերի 23:

նստավայրից, Ազգային ժողովից, կառավարության նստավայրերից, դատարաններից և քրեակատարողական հիմնարկներից այնպիսի հեռավորության վրա, որի դեպքում այն «սպառնում է դրանց բնականոն գործունեությանը», առանց հստակեցնելու, թե որ հեռավորությունն է համարվում սպառնացող:

Չնայած 2010թ. տեղի ունեցած իրավական այս փոփոխություններին, հավաքների ազատությունը շարունակվում էր սահմանափակվել: Տուցարարների մուտքն այն վայրերը, որտեղ ցույցեր են անցկացվում որոշ դեպքերում սահմանափակվում է: 2010թ. մայիսի 28 –ին և 31-ին ոստիկանությունը խոչընդոտել էր ակտիվիստների մուտքը, որոնք գնում էին Ազատության հրապարակ՝ իրենց բողոքն արտահայտելով 2008թ. մարտյան բախումներից հետո հրապարակի (հիմնականում վերջին տարիներին այստեղ էին անցկացվում ցույցերը) փաստացի փակ լինելու դեմ: Մայիսի 31-ին ոստիկանության հետ հակադրությունը տևել էր մեկ ժամ և զուգորդվել էր երկկողմ վիրավորանքներով: Մի քանի հոգի քաղաքացիական հագուստով միացել էին ոստիկանությանը: Տասնյոթ ցուցարար բերման էին ենթարկվել ոստիկանության բաժիններ: Նրանցից երեքը՝ «Հայկական ժամանակ» թերթի լրագրող **Անի Գևորգյանը**, նրա եղբայրը՝ ընդդիմադիր **Սարգիս Գևորգյանը** և ընդդիմադիր **Դավիթ Քիրամիջյանը** ձերբակալվել էին և նրանց մեղադրանք էր առաջադրվել: Մնացած տասնչորսին ազատ էին արձակել: Անի և Սարգիս Գևորգյանները մեղադրվել էին ՀՀ Քրեական օրենսգրքի 316 (1) հոդվածով (իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը): Դատարանը նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել էր կալանքը, որը հետագայում փոխարինվեց բնակավայրից չհեռանալու մասին ստորագրությամբ:

Դավիթ Քիրամիջյանը մեղադրվել էր Քրեական օրենսգրքի 258 (3) հոդվածով (խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից): 2010թ. հունիսի 3-ին Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը որոշեց նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանքը: Իսկ 2010թ. հուլիսի 2-ին դատարանը որոշում կայացրեց Քիրամիջյանին ազատ արձակելու մասին՝ որպես խափանման միջոց ընտրելով բնակավայրից չհեռանալու մասին ստորագրությունը: 2010թ. նոյեմբերին Անի Գևորգյանի նկատմամբ գործը կարճվեց նախաքննության փուլում: 2010թ. դեկտեմբերի 28-ին առաջին աստիճանի դատարանը Դավիթ Քիրամիջյանի և Սարգիս Գևորգյանի նկատմամբ սահմանեց երկու տարի ազատազրկում, պատիժը պայմանական չկիրառելով և նշանակելով փորձաշրջան: Երկուսն էլ բողոքարկեցին որոշման դեմ, սակայն 2011թ. ապրիլի դրությամբ Վերաքննիչ դատարանն այդ կապակցությամբ դեռևս որոշում չի ընդունել: Բացի այդ, 2010թ. մայիսի 31-ին քաղքշուկից հետո, ոստիկանությունը ուժի կիրառմամբ ոստիկանության Կենտրոնի բաժնից դուրս մղեց ձերբակալվածներին ազատ արձակելու պահանջով հավաքված իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչներին, քաղաքական և մարդու իրավունքների ակտիվիստներին⁹:

Երեք փաստաբանների նկատմամբ դատական վարույթների դադարեցում

2010թ. դադարեցվեցին դատական վարույթները երեք փաստաբանների նկատմամբ, որոնք հետապնդվում էին իրենց գործունեության պատճառով: Վարույթը, որը հարուցվել էր «դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի» համար (ՀՀ Քրեական օրենսգրքի 343.1 հոդվածով¹⁰) **Մուշեղ Շուշանյանի** դեմ, որը հանդիսանում էր 2008թ. մարտի դեպքերի կապակցությամբ ձերբակալված հինգ անձանց պաշտպանը, դադարեցվել է 2010թ. հունվարի 14-ին, երբ Սահմանադրական դատարանը հայտարարեց, որ 343.1 հոդվածը հակասում է Սահմանադրությանը:

⁹ Տես՝ ՔՀԻ հայտարարությունը, 2010թ. հունիսի 3:

¹⁰ 343.1 հոդվածը, ի թիվս այլոց, նախատեսում է տուգանք կամ մեկ ամիս տևողությամբ կալանք այն պաշտպանների համար, որոնք «անհարգալից վերաբերմունք են ցուցաբերել դատարանի նկատմամբ»՝ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելով կամ դատավորի կարգադրությանը չենթարկվելով

Շուշանյանի գործը փակվեց 2010թ. հունվարի 22-ին: 2010թ. փետրվարի 5-ին Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը արդարացման որոշում կայացրեց Հայաստանի Հելսինկյան Ասոցիացիայի անդամ և ֆոտո լրագրող **Արշալույս Հակոբյանի** վերաբերյալ՝ ապացույցների բացակայության պատճառով¹¹: Նրան մեղադրանք էին առաջադրել «իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու համար»: Դատաքնության ժամանակ Արշալույս Հակոբյանը հայատարարել էր, որ ոստիկանությունում նրան ծեծի և դաժան վերաբերմունքի են ենթարկել: Չնայած, որ նա բողոք էր ներկայացրել, դատարանը քննություն չէր նշանակել այդ մեղադրանքի կապակցությամբ: Նմանապես, 2010թ. մարտի 11-ին «SOS Թեղուտ» կազմակերպության բնապահպան ակտիվիստ **Մարիամ Սուխուդյանի** նկատմամբ առաջադրված մեղադրանքը հանվել է: Նրան մեղադրանք էր առաջադրվել «գրպարտության» համար 2009թ. օգոստոսի 11-ին՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության «Հայլուր» ծրագրում սեռական ոտնձգության դեպքի մասին հայտարարություն անելուց հետո¹²:

2010թ. հունիսի 24-ին Մարիամ Սուխուդյանը բողոք էր ներկայացրել գլխավոր դատախազություն՝ իր դեմ անհիմն և անօրինական բնույթի մեղադրանքներ առաջադրելու վերաբերյալ: Սակայն 2010թ. սեպտեմբերի 4-ին Հատուկ քննչական ծառայությունը հրաժարվեց գործ հարուցել: Մարիամ Սուխուդյանը բողոքարկեց այդ որոշումն Առաջին ատյանի դատարանում և Վերաքննիչ դատարանում, սակայն երկու դատարաններն էլ մերժեցին բողոքները, համապատասխանաբար՝ 2010թ. դեկտեմբերի 23-ին և փետրվարի 1-ին: 2011թ. մարտի 12-ին մեկ այլ բողոք ներկայացվեց Վճռաբեկ դատարան, որը մերժվեց, պատճառաբանելով, որ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ տեղի չեն ունեցել: Իսկ 2011թ. փետրվարի 7-ին Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատարանը մերժեց Մարիամ Սուխուդյանի՝ իր անմեղության կանխավարկածը խախտելու համար ՀՀ Ոստիկանության պետ Ալիկ Սարգսյանի և ՀՀ ոստիկանության հասարակության հետ կապերի վարչության պետ Սայաթ Շիրինյանի դեմ հայցադիմումը և մեկ միլիոն ՀՀ դրամ վնասի հատուցման պահանջը՝ 2008թ.-ին իրեն հրապարակավ արատավորելու համար:

Հրատապ միջամտություն Օբսերվատորիայի կողմից. 2010թ. հունվարից մինչև 2011թ. ապրիլ

Անուն	Խախտում/ հետագա քայլեր	Վկայակոչում/հղում	Ամսաթիվ
Արշալույս Հակոբյան	Արդարացում	Համատեղ մամուլի հաղորդագրություն	Փետրվարի 16, 2010թ.

¹¹ Արշալույս Հակոբյանը ձերբակալվել էր 2009թ. հունիսին՝ Երևանի ավագանու ընտրություններին որպես դիտորդ հանդես գալուց հետո և ազատ էր արձակվել գրավով 2009թ. հոկտեմբերին, Օբսերվատորիայի տարեկան զեկույց 2010:

¹² Առաջին գործը հարուցվել էր 2009թ. օգոստոսի 11-ին «գրպարտության» համար, այնուհետև օգոստոսի 15-ին՝ «սուտ մատնության համար» և հոկտեմբերի 21-ին հանցագործությունը կրկին վերադրվել էր որպես «գրպարտություն»: